ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարանում» պահվող «Կաթողիկոսական դիվանի» սրբաբատառ վավերագրերի մեջ ուրույն տեղ են գրավում շուրջ 400 թուրքերեն փաստաթղթերը, որոնց ժամանակագրական սահմանը սկիզբ է առնում 1586 թ. և հասնում է մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները։

Շուրջ 350 տարվա պատմական ընդարձակ մի ժամանակաշրջան ընդգրկող այս վավերագրերը պահպանվել են վանական արխիվներում և հիմնականում վերաբերում են էջմիածնի, Մակվի Թադեոս առաքյալի, Դարաշամբի Ստեփանոս նախավկայի, Ագուլիսի Թովմա առաքյալի, Մշո սուրբ Կարապետի, Աղթամարի, Բայազետի, Բաբերդի և այլ վանքերի։

Հիշյալ վանքերում պահպանված վավերագրերի կենտրոնացումը էջմիածնի դիվանում կատարվել է ավելի ուշ՝ XIX դարի վերջերում և հատկապես XX դարի սկզբներին, իսկ Աղթամարին և Վանի եկեղեցիներին վերաբերող ոչ մեծ թվով փաստաթղթերը էջմիածին են բերվել 1915—1916 թթ.։

Սիմեոն Երևանցին իր մեծարժեք ուսումնասիրության մեջ նկարագրել է էջմիածնի դիվանում առկա ընդամենը 88 թուրքական հրովարտակներ, կալվածագրեր և այլ պաշտոնական վավերագրեր, որոնց ժամանակագրական սահմանը հասնում է մինչև XVIII դարի 70-ական թթ.։ Նա առաջին անգամ արխիվային մշակման է ենթարկել դրանք, դասակարգել ըստ շնորհող ինստանցիաների և 22-րդ գլխում շարադրել Արևմտյան Հայաստանում էջմիածնի ունեցած իրավունքների և օսմանյան պետության ու հայոց եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունը[1]։ Գնահատելով օսմանյան հրովարտակների և այլ պաշտոնական վավերագրերի քաղաքական ու իրավական նշանակությունը և մտահոգված դրանց հետագա պահպանությամբ, նա խրատում է իր հետնորդներին, ասելով. «Թէպէտ տուողքն են այլազգիք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն՝ տուրք և հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտակարք, բուժիչք և ապահովացուցիչք, որպէս ի յօձից թունաւորաց սպասեմք առնուլ զթրակէզս ի բուժումն պես-պես ցաւոց։ Զայս վասն այսօրիկ երկարեմ, զի և դու ի յունիլդ զգուշութեամբ պահեսցես զմնացեալսն առ քեզ, եւ մի ասիցես թէ այժմ այսինչ ռաղամ անօգուտ է և կամ թէ թագաւորքն ոչ գոն զի՞նչ օգտեն հրամանք նոցա, զի պիտոյանան բազմիցս, և իւրաքանչիւրոցն գոյ ժամանակ պիտանաւորութեան, որպէս մեք փորձեցաք բազմիցս»[2]։

Ինչպես պարսկերեն, այնպես էլ թուրքերեն վավերագրերի դասակարգումը Սիմեոն Երևանցին կատարել է՝ ելնելով դրանց պաշտոնական բնույթից։

---

[1] Սիմեոն Երևանցի. Ջամբռ. Վաղարշապատ, 1873, էջ 234—252։

[2] Նույն տեղում, էջ 210։

Սուլթանական հրովարտակների մասին նա խոսում է 22-րդ գլխում, իսկ մյուս թուրքերեն փաստաթղթերը նկարագրված են հաջորդ՝ «Գրեանք օսմանցոց փաշայից Շեյ-իսլամից և այլոց իշխողաց, զորս տուեալ են սրբոյ Աթոռոյս» խորագիրը կրող գլխում[3]։

Սիմեոն Երևանցու ձեռքի տակ եղած 88 վավերագրերը բացառապես վերաբերում էին էջմիածնին, հաստատում էին կաթողիկոսներին և նրանց իրավունքները, կամ լուծում վանքի կալվածատիրության ու հարկային արտոնությունների հետ առնչվող հարցեր։ Ուստի միանգամայն պատահական էր դրանց դասակարգումն ու ուսումնասիրությունը վերոհիշյալ կարգով։

Ներկայումս սակայն, ինչպես նշվեց և՛ ժամանակագրական, և՛ բովանդակության, ինչպես նաև աշխարհագրական առումով մեզ հասած մեծաքանակ վավերագրերը խիստ բազմազան են ու տարատեսակ։ Այսուհանդերձ, իրենց գերպաշտոնական բնույթով առանձնանում են սուլթանական հրովարտակները կամ բերաթները, որոնք և՛ ծավալով, և՛ շարադրման եղանակով, և՛ արծարծված հարցերի ամբողջական խմբավորմամբ ուրույն գիտական հետաքրքրություն են ներկայացնում։

Բերաթները գլխավորապես հրապարակվում էին սուլթանին ներկայացված որևէ խնդրագրի կամ դիմումի հիման վրա, որոշելու կամ հաստատելու համար խնդրարկուի պաշտոնն ու իրավունքները։ Կաթողիկոսներին տրվող բերաթների համար կար նախապես հաստատված ձև։ Դարերի ընթացքում մշակված էին բոլոր տիտղոսներն ու էպիտետները, ինչպես նաև հաստատման ենթակա իրավունքների և արծարծվող հարցերի հաջորդականությունը։

Հայ կաթողիկոսների իրավունքները հաստատող բերաթների համեմատությունը նույն ժամանակաշրջանի դիամեթների, թիմարների, փաշալիքների, վոյեվոդության և օսմանյան կայսրության այլ ֆեոդալական տիրույթների հաստատման ֆերմանների հետ հնարավորություն է տալիս ճշտելու դրանց և՛ դիվանական, և՛ պաշտոնական ընդհանրություններն ու առանձնահատկությունները։

Օսմանյան դիվանագրության բնորոշ ընդհանուր հատկանիշներով հանդերձ, կաթողիկոսական բերաթները առանձնանում են որպես կրոնական համայնքների իրավական վիճակն արտացոլող փաստաթղթեր և օգնում են պարզելու եկեղեցական իշխանությունների իրավասության սահմանները։ Դրանց մեջ արտահայտված է օսմանյան պետության կողմից դարերի ընթացքում հաստատված որոշակի վերաբերմունքը այլակրոն համայնքների ներքին վարչության և նրանց նկատմամբ կիրառվող տնտեսական-հարկային քաղաքականության վերաբերյալ։

Սանոթանալով հրովարտակների (մեծ մասամբ մեկը մյուսին կրկնող) բովանդակությանը, դժվար չէ նկատել, որ եկեղեցական համայնքները Օսմանյան կայսրության մեջ դիտվել են որպես հասութաբեր հաստատություններ. ինչպես տարբեր կարգի տիրույթներ ու ավատներ ստացող ֆեոդալները, այնպես էլ հոգևոր վիճակներին ու վանքերին տիրող հոգևորական առաջնորդները պարտավոր էին հավատացյալներից գանձվող եկամուտի դիմաց որոշ գումար մուծել արքունի գանձարանը։

Պետական պաշտոնների ու ռազմա-ֆեոդալական տիրույթների վարձա-

3 Նույն տեղում, էջ 249։

կալական-կապալային կամ «մուկաթիայի» սիստեմը, որն ընկած էր կայսրության ֆինանսների հիմքում, հավասարապես վերաբերում էր հոգևոր պաշտոններին ու վանական հաստատություններին. բերաթներում պարզ ասված է, որ կաթողիկոսներից գանձվող գումարները դրանցված էին «եպիսկոպոսական մուկաթիայի դաֆթարներում»[4]։ Որ այդ գումարները պայմանավորված էին տվյալ թեմից կամ թեմերից գանձվող հոգևոր տուրքերի ընդհանուր քանակով, դա պարզ երևում է այն բանից, որ երբ Պոլսի պատրիարքների հետ երկար վեճերից հետո Հակոբ Շամախեցու օրոք (1759—1763) Զմյուռնիայի թեմը նորից մտցվում է տերունի թեմերի շարքը, նախապես որոշված 6800 ակչե կաթողիկոսական տուրքի կամ «մակթուի» վրա գումարվում է նաև մուկաթիաների դաֆթարում դրանցված Իզմիրի վիճակի 4000 ակչեն, և այնուհետև կաթողիկոսական մակթուն դառնում է 10800 ակչե[5], «քանզի Իզմիրու մախթուն,— գրում է Սիմեոն Երևանցին,— (որ է արքունական հարկն՝ զոր ի նստելն առաջնորդին տալ պարտի) էր չորս հազար ստակ, որ է երեսուն և երեք ղուռուշ ԺԳ փարայ և Ա ստակ, զայս ևս եդեալ ի վերայ մախթուին կաթողիկոսացն, արարաք զնա տասն հազար ութն հարիւր ստակ, որ է իննսուն ղուռուշ»[6]։

Սուլթան Աբդուլ-Համիդ 1-ի 1774 թ. հրովարտակով հաստատվում է, որ Սորագյալի Ագարակ գյուղի Ս. Եղիայի կամ Խրտրը Իլյազի և Զըլդըրի ու Ղարսի կազաների սահմանում գտնվող Խաչվանիկի վանքերը ենթակա են էջմիածնին, որոնցից ստացվող 1000 ակչե մակթուն մուտք էր արված եպիսկոպոսական մուկաթիայի դաֆթարում, որպես արքունի տուրք կամ «միրի փիշքաշ»[7]։ Նույն սուլթանի 1775 թ. մի այլ հրովարտակով Պոլսի Զաքարիա պատրիարքի համաձայնությամբ Կարնո կազայում գտնվող Մուտուրկու Ս. Լուսավորչի վանքը վանահայր Բաղդասար վարդապետի մահվանից հետո հանձնվում է էջմիածնի տնօրինությանը և ըստ նույն դաֆթարի, որպես «միրի փիշքաշ» արքունի գանձարանն է մուծվում 7200 ակչե[8]։

Չնայած իրենց նույնատիպ շարադրանքին, կաթողիկոսական բերաթներում յուրովի արտացոլված են հայ եկեղեցու կյանքում և հայ իրականության մեջ տեղի ունեցած կարևոր դեպքերը, մեծ մասամբ կապված Պոլսի պատրիարքների ու էջմիածնի կաթողիկոսների միջև ծագած և երբեմն շատ սուր բնույթ կրող ընդհարումների և կաթողիկոսական աթոռի շուրջ ծավալված վեճերի ու տարաձայնությունների հետ։

Պայքարը հիմնականում մղվում էր ազդեցության շրջանների և առանձին թեմերի ու վիճակների շուրջ։ Այս հարցում խիստ կարևոր նշանակություն են ունեցել Օսմանյան կայսրության մեջ պատրիարքներին վերապահված և արքունի դիվանի կողմից հաստատված իրավունքները, որոնք վերաբերում էին կայսրության սահմաններում գտնվող հայ լուսավորչական համայնքներին։ Սակայն պատրիարքները, օգտվելով նպաստավոր դիրքերից,

---

4 Մաշտոցի անվ. Մատենադարան, ԿԲԴԿ. դիվան, թղթ. 1դ, վավ. 448, 479։ بيسقبوس مقاطعه‌سى دفترلرى

5 Նույն տեղում, թղթ. 1դ, վավ. 439։

6 «Ջամրռ», էջ 237։

7 ԿԲԴԿ. դիվան, թղթ. 1դ. վավ. 479։

8 Նույն տեղում, վավ. 480։

փորձում էին միջամուխ լինել նաև էջմիածնի գործերում և հասնել այն բանին, որ էջմիածնի և օսմանյան արքունիքի միջև տարվող բանակցությունները կատարվեն Պոլսի պատրիարքների միջնորդությամբ, իսկ նոր կաթողիկոսների և կայսրության տերիտորիայում նրանց իրավունքների հաստատման բերաթները հրապարակվեն պատրիարքների ներկայացմամբ ու թելադրանքով։

Պատրիարքների այս ձգտումները հաջողությամբ չէին պսակվում, քանի որ էջմիածնի կաթողիկոսարանը գտնվում էր Սեֆյան Իրանին ենթակա Արարատյան երկրում, որպիսի քաղաքական իրավիճակը թելադրում էր ավելի շրջահայաց և դիվանագիտորեն ճշգրտված հարաբերություններ։ Ուստի միանգամայն հասկանալի է, թե ինչու էջմիածնի կաթողիկոսական բերաթների ձեռքբերման իրավունքի սեփականումը Պոլսի պատրիարքների կողմից հնարավոր դարձավ միայն 1726 թ., երբ օսմանյան զորքերը օկուպացրել էին Արարատյան երկիրը և Անդրկովկասի ու Ատրպատականի մեծ մասը։ Նույն թվականին Կարապետ Ուլնեցի (1726—1729) կաթողիկոսին տրված Սուլթան Ահմեդ III-ի հրովարտակում Երևանյան նահանգն արդեն համարվում է «Իրանից նվաճված և օսմանյան ապահով երկրներին միացված»[9]։

Անսպասելիորեն պարզունակ է այս իրողության՝ Սիմեոն Երևանցու մեկնաբանությունը, երբ էջմիածնի իրավունքների բռնագրաումը նա բացատրում է միայն պատրիարք Հովհաննես Բաղիշեցու և նորընծա կաթողիկոսի անձնական հատկանիշներով, շեշտելով հատկապես, որ այն տեղի ունեցավ «Ի հրաւիրիլն ի կաթողիկոսութիւն վերոյիշեալ Կարապետ կաթողիկոսիդ (որ էր յայն կուսացի, և մանաւանդ ի վիճակէն Սրսոյ), Աթոռոյս որպիսութեան, պատուոյ և իշխանութեան ամենեին անտեղեակ, ինքն ևս ծեր և պարզամիտ, իսկ այն Յովհաննես վարդապետն Բաղիշեցի (որ էր պատրիարգ Պոլսոյ) խորամանկ, շոքմոգ, կեղծաւոր և խաբող, որպես բերքն է Բաղիշու և այնց կողմանց»[10]։ Այստեղ անգիտացված է այն իրողությունը, որ այդ ժամանակ Պոլսում գտնվող էնկյուրիո թեմի առաջնորդ Կարապետ Ուլնեցու հրավիրումն ու նշանակումը Աստվածատուր Համատանցու մահից հետո թափուր մնացած էջմիածնի կաթողիկոսության պաշտոնում, լիովին համահնչյուն էր նորանըվաճ երկրամասերը հպատակեցնելու և օսմանյան պետական վարչակարգին ենթարկելու քաղաքականությանը։ Չպետք է մոռանալ, որ հնուց հաստատված կարգով Պոլսի պատրիարքը հանդիսանում էր կայսրության սահմաններում բնակվող բոլոր հայ լուսավորչական համայնքների ներկայացուցիչ։

Նվաճված երկրամասերում թուրքական իշխանությունների վարչական և տնտեսական ու հարկային քաղաքականության վերաբերյալ բացառիկ կարևոր աղբյուրներ են 1590—1605 և հատկապես 1725—1735 թթ. Արևելյան Հայաստանում թուրքական բերդապահ կայազորների հրամանատարների, փաշաների ու նրանց ստորադաս պաշտոնյաների կամ սրանց կողմից նշանակված հոգևորական դատավորների, զագիների ու շեյխ-ուլ-իսլամների հրապարակած հրամանագրերն ու վճիռները (բյուրուլթիներ և ֆիթվաներ)։

---

9 Կթղկ. դիվան, թղթ. 14, վավ. 308, 309, 310, 313. و فتح ممالك ايرانلك و ضمايم ممالك محروسة المسالكم قلنان تسخير

10 «Ջամրոս», էջ 235։

XVI դարի վերջին տասնամյակին և XVII դարի սկզբին վերաբերող վավերագրերը անհամեմատ սակավ են և առավելապես վերաբերում են Բաղեի, Դարաշամբի, Աստապատի ու մերձակա վանքերին, մասամբ նաև՝ Մակվի, Զորսի, Նախիջևանի և Գողթնի առանձին գյուղական համայնքների։ Առավել կարևոր են, սակայն, XVIII դարի 20—30-ական թթ. վավերագրերը, որոնք արժեքավոր տվյալներ են պարունակում ներքին առևտրի, մաքսային գանձումների և ժողովրդական տնտեսության մեջ առևտրական ու վաշխառուական կապիտալի ներդործուն դերի վերաբերյալ։

Պատմական այս ժամանակահատվածի ամենասարժեքավոր վավերագրերը 1725—1730 թթ. Վաղարշապատի հարկացուցակներն են, որոնք քաղվածաբար դուրս են բերված Երևանի լիվայի ընդարձակ հարկային մատյանից (դեֆթեր-ի սուֆեսսել)[11]։ Հարկացուցակների եզակի արժեք ներկայացնող տրվյալներով հաստատված է, որ թուրքական օկուպացիոն իշխանությունները Անդրկովկասի որոշ մասին տիրելուց անմիջապես հետո սկսել են այնտեղ գործադրել Օսմանյան կայսրության մեջ կիրառվող հարկային սիստեմը. կատարել են ընդհանուր աշխարհագիր և կազմել նահանգային «ընդարձակ հարկային ցուցակներ»։

Հաջորդ աշխարհագիրն ու բնակչության և հարկատու համայնքների ու օբյեկտների հաշվառումը կատարվել է 1728 թ., երբ թուրքական զորքերը, ձեռնարկելով ընդհանուր հարձակման, թափանցել են Արցախ, մասամբ նաև Սյունիք և նվաճել Անդրկովկասի գլխավոր ամրությունները։ Այս իրողությունը յուրովի արտացոլված է նոր հարկացուցակում, որտեղ բազմապատկված են բնակչությունից գանձվող հարկերը և ավելացված են նոր հարկեր։ Գյուղից գանձվող հարկերի ընդհանուր դրամական համարժեքը 1725 թ. կազմում էր 91515 ակչե, իսկ 1728 թ.՝ 211322 ակչե։ Այդ նշանակում էր, որ բնակչության հարստահարությունն ու կողոպուտը նվաճման առաջին տարվա համեմատությամբ ավելացել էր շուրջ 2,5 անգամ[12]։

1725—1735 թթ. նվաճման շրջանի վավերագրերը կարևոր են նաև պարզելու համար թուրքական վարչակարգի և զինվորական իշխանությունների ազդեցության սահմանները։ Վավերագրերը մեծ մասամբ վերաբերում են Արարատյան երկրին, Երևանին և մերձակա շրջաններին։ Զգալի թիվ են կազմում նաև Նախիջևանի, Աստապատի, Ագուլիսի և Օրդուբադի շրջաններին վերաբերող վավերագրերը, այսինքն՝ այն շրջանների, որտեղ համեմատաբար ավելի կայուն է եղել օկուպացիոն իշխանությունը։

Հայտնի է, որ այս տարիներին թուրքերը հասցրել են կազմել նաև Գանձակի վիլայեթի հարկացուցակը[13], իսկ Դանձասարի դիվանում պահպանվել են 1729 թ. հետո դրված որոշ փաստաթղթեր, այդ թվում նույն թվականի փետրվարի 14-ին հրապարակված Մուստաֆա փաշայի հրամանը, որով վախճանված Եսայի կաթողիկոսի տեղ կաթողիկոս է նշանակվում նրա եղբայր Գրիգորը[14]։ Դա նշանակում է, որ, թեև կարճ ժամանակով, Ղարաբաղը ևս են-

[11] ԿԹԳԿ. դիվան, թղթ. 1գ, վավ. 293, 316, 320, 332։

[12] Այս հարկացուցակների մասին ավելի մանրամասն տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 431—464։

[13] O. L. Barkan. XV ve XVI inci asırlarda Osmanlı İmperatorluğunda zirai ekonominin hukuki ve mali esasları, I cild „Kanunlar", İstanbul, 1945, էջ 195—197.

[14] ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, գործ 4, վավ. 1։

թարկվել է օկուպացիոն ուժերի հրամանատարությանը։ Ուշագրավ է, սակայն, այն փաստը, որ ներկայումս կաթողիկոսական դիվանում գտնվող Տաթևի վանքի այլալեզու վավերագրերի մեջ, որտեղ պահպանվել են նույնիսկ Կարակոյունլու սուլթան Ջհանշահի և նրա որդու՝ Հասան-Ալիի XV դարի հնագույն հրովարտակները[15], չենք գտնում և ոչ մի օսմանյան վավերագիր։ Այս փաստը ևս գալիս է հաստատելու, որ թուրքերին երբեք չի հաջողվել Հափանում հասնել քիչ թե շատ տևական տիրապետության։ Այլապես էջմիածնի, Դանձասարի, Աստապատի, Ագուլիսի և մյուս վանքերի նման Տաթևի առաջնորդները ևս պետք է իրենց հրամանագրերը ստանային թուրքական իշխանություններից, ինչպես նաև դիվանում պահպանված կլինեին վանքի կալվածատիրական իրավունքներն ու մուտքությունը հաստատող օսմանյան վավերագրեր։

Եթե այս շրջանի ընդարձակ հարկացուցակներից հանված քաղվածքները օգնում են պարզելու թուրքական օկուպացիոն իշխանությունների հարկային քաղաքականությունը Անդրկովկասում, ապա նշված ժամանակաշրջանի մյուս պաշտոնական վավերագրերը չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են՝ նվաճված երկրամասերում նույն իշխանությունների կողմից վարվող տնտեսական ու վարչական և հատկապես ագրարային քաղաքականության ուսումնասիրության համար։

Ինչպես զինվորական հրամանատարների ու փաշաների «բույուրուլթիները» (հրամանագրեր), այնպես էլ տեղական շարիաթական ատյաններում ու նոտարական դրասենյակներում գյուղերի, ագարակների և այլ հողային տիրույթների շուրջ կատարվող զանազան տնտեսական գործարքների վերաբերյալ կազմված արձանագրությունները գալիս են հաստատելու, որ 1725—1735 թթ. օկուպացիայի շրջանում ղզլբաշների տիրապետության օրոք գործող հողատիրության սիստեմում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել։

Մուլքային հողատիրության հիմնական ատրիբուտները առկա են մեզ հասած բոլոր կալվածագրերում և մանավանդ իշխանության ներկայացուցիչների կողմից տրված հրամանագրերում ու շարիաթական վավերագրերում։ Կարգապահական օրգանները հետևողականորեն պաշտպանում էին գյուղատերերի կամ մալիքների սեփականատիրական իրավունքները, ամենուրեք հարկադրելով հողագործ ռայաթներին՝ անթերի կատարել հողատիրոջ նկատմամբ ունեցած բոլոր պարտականությունները։ Կալվածատիրական լծի թեթևացման նպատակով ձեռնարկվող որևէ փորձ, բողոք կամ ընդդիմադրություն անողը կերպով ճնշվում էր թուրքական զինվորական իշխանությունների բռնի ուժով։ Հրամանագրերում ամենուրեք հրահանգվում էր տեղական նաիբներին ու մուրաշիրներին՝ խստորեն պահպանել կալվածատիրոջ ու ռայաթների փոխադարձ հարաբերությունների՝ ղզլբաշների տիրապետության օրոք սահմանված կարգը։

1725—1728 թթ. մի քանի շարիաթական արձանագրություններում և սրանց հիման վրա հրապարակված՝ Երևանի Դաջաբ և Մուստաֆա փաշաների հրամանագրերում Վաղարշապատ, Օշական, Մաստարա և այլ գյուղերի ռայաթներին, որոնք ըմբոստանալով՝ թերանում էին կատարել իրենց պարտավորու-

15 «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, 1956, վավ. 1, 2, 4։

թյունները և պահանջում էին վերանայել կալվածատիրոջը հատուցվող ռենտայի հնուց սահմանված նորմերը, խստագույնս հրահանգվում է՝ անթերի հատուցել գյուղատիրոջը հասանելիք ռենտան[16]։

Այս ժամանակաշրջանին են վերաբերում նաև Քասախ և Մեծամոր գետերի ջրային ռեսուրսների օգտագործման շուրջ Էջմիածնի վանքի և Կարբիի շրջանի գյուղական համայնքների միջև ծագած վեճերի կարգավորման կապակցությամբ հրապարակված՝ Արդուլլա և Ալի վեզիրների հրամանագրերն ու Երևանի Շարի ատյանում կազմված արձանագրությունները[17]։ Տրված հրամաններն ու ընդունված որոշումները հանգում են այն բանին, որ թեև ջրանցքները հանված ու նորոգված էին Էջմիածնի միջոցներով, սակայն դրանցով հոսող ջրերի միայն կեսն էր պատկանում վանքին, իսկ մյուս կեսով պիտի ոռոգվեին այն բոլոր 20 գյուղերի հանգերն ու այգիները, որոնց սահմաններով անցնում էր ջրանցքը[18]։

Գյուղական համայնքների՝ ջրի նկատմամբ ունեցած և վաղնջական ժամանակներից եկող սեփականատիրական իրավունքների մասին վկայող այս վավերագրերը եզակի նշանակություն ունեն հատկապես Արարատյան երկրի ագրարային հարաբերությունների ուսումնասիրության համար, որտեղ արհեստական ոռոգումը գյուղատնտեսության զարգացման գլխավոր նախապայմանն էր։

Այստեղ դրսևորված է նաև արևելյան պետություններում էնգելսի կողմից մատնանշված երեք հիմնական վարչություններից մեկը «հասարակական աշխատանքների վարչությունը» կամ, որ նույնն է, «հոգատարություն վերարտադրության մասին», քանի որ դա վերաբերում էր 20 խոշոր գյուղերի, որոնցից պետությունը (ներկա դեպքում՝ օկուպացիոն իշխանությունները) հսկայական եկամուտ էր ստանում և որոնց բնակիչներից շատերը պետական կամ «միրի» հողեր էին մշակում։

Ինքնին հասկանալի է, որ ինչպես Արարատյան երկրում, այնպես էլ Անդրկովկասի մյուս շրջաններում գտնվող «դիվանի» և «խալիսե» գյուղերը, որոնք պետական սեփականություն էին, օսմանյան օկուպացման շրջանում անմիջապես ենթարկված էին զինվորական նահանգապետների կողմից նշանակված պաշտոնյաներին և մտցված էին «միրի» հողերի շարքը։ «Միրի» էին դարձված նաև օսմանցիներին դիմադրություն ցույց տվող կամ նվաճումից հետո էմիգրացիայի ենթարկված ֆեոդալներին ու իրանական պետական պաշտոնեությանը պատկանող հողերն ու մյուս անշարժ կալվածները։

1729 թ. մի կալվածագրից իմանում ենք, որ «միրի» սեփականություններ հայտարարված կալվածները վաճառքի էին հանվում օսմանյան իշխանությունների կողմից, և առուծախի ժամանակ որպես գնորդներ հանդես էին գալիս և՛ տեղացի հողատերեր ու առևտրական դասի ներկայացուցիչներ, և՛

16 Տե՛ս հոդվածի վերջում հրապարակվող վավերագիրը։

17 Կիրկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 304, 339, 340, 344 և այլն։

18 Նույն տեղում, վավ. 304, 344. حرق مزبورك صوتى جمله معرفتيله تنصيف اولنوب نصفى اوچ كليسايه و نصف اخرى يكرمى پاره قريه‌يه ويريلوب نزاعلرى قطع اولندى

թուրք զինվորական ու վարչական պաշտոնյաներ ու առանձին հոգևորականներ[19]։

Այս շրջանի կալվածագրերի և հարկացուցակների շնորհիվ հնարավոր է ավելի որոշակի ուրվագծել նշված տասնամյակի ընթացքում ժողովրդական տնտեսության բայրայման, մթերքների ու այլ կենսամիջոցների արտադրության և բնակչության կենսամակարդակի ահավոր անկման մասյալ պատկերը։ Դժվար չէ նկատել, որ անշարժ կալվածների գները արագորեն ընկնում են, իսկ մթերքների գները՝ բարձրանում, նվազում է ապրանքաշրջանառությունը և զգացվում կանխիկ դրամի մեծ պակաս։ Այս առումով ուշագրավ են թուրքական իշխանությունների կողմից մտցված մաքսային սահմանափակումները, երբ ավելի մեծ մաքս էր գանձվում ներմուծվող ապրանքներից և ընդհակառակը, շարունակ իջեցնելով արտահանվող ապրանքներից գանձվող մաքսը, օբյեկտիվ նախապայմաններ էին ստեղծում երկրի արագ աղքատացման համար[20]։

Այս երևույթը ավելի ցայտուն կերպով էր դրսևորվում Անդրկովկասից և Իրանից արտահանվող հիմնական ապրանքի՝ մետաքսի տարբեր տեսակների մեծաքանակ արտահանման ժամանակ։ Կաթողիկոսական դիվանում պահպանվել է 1729 թ. Թավրիզի փաշայի և մի խումբ թուրք վաճառականների միջև կնքված և վերջիններիս կնիքներով ու փաշայի մակագրությամբ հաստատված պայմանագրի բնագիրը, որով համաձայնություն է կայացվում, որպեսզի Գիլանից դեպի Թուրքիա փոխադրվող մետաքսի բեռներից մաքս գանձվի միայն Արդաբիլում ու Թավրիզում և կարգադրվում է Ատրպատականի մյուս բաղարների մաքսատներին՝ մետաքսի բեռներից մաքս չպահանջել[21]։ Պայմանագրի բովանդակությունից պարզ երևում է, որ թուրքական իշխանությունները այդ տարիներին ամեն կերպ աշխատել են նպաստավոր պայմաններ ստեղծել և արտոնություններ տալ թուրք վաճառականներին՝ նրանց օսմանյան տերությանը մեծ եկամուտներ բերող մետաքսի առևտրի մեջ ներգրավելու համար, եկամուտներ, որոնք գոյանում էին տարանցիկ առևտրից գանձվող և հատկապես նավահանգստային մաքսերից։

Թուրք վաճառականների հետ կնքված համաձայնագրի բնագրի պահպանումը Էջմիածնի կաթողիկոսական դիվանում հուշում է, որ օկուպացիոն իշխանությունները ցանկացել են մաքսային նոր կարգի մասին տեղեկացնել նաև հայ վաճառականությանը, որն, ինչպես գիտենք, դարեր շարունակ առաջատար դեր է խաղացել իրանական մետաքսի արտահանման գործում։

Ինչպես սույն պայմանագրի, այնպես էլ մաքսերի և առևտրական տուրքերի վերաբերյալ մի քանի այլ պաշտոնական վավերագրերի բովանդակած փաստական նյութի գիտական մշակումը մեծ չափով կարող է նպաստել Անդրկովկասում թուրքական օկուպացիոն իշխանությունների վարած տնտեսական բաղաքականության թալանչիական բնույթի բացահայտմանը։ Այդ բաղաքականության մեջ Օսմանյան կայսրությանը բնորոշ ձևերով դրսևորված է Էնգելսի մատնանշած՝ Արևելքի երկրների մյուս երկու (ֆինանսական և ռազմական) վարչությունների գործունեությունը, որ ուղեկցվում էր «սեփա-

19 Նույն տեղում, վավ. 324։

20 Նույն տեղում, վավ. 308, 310, 311, 325, 343, 347 և այլն։

21 Նույն տեղում, վավ. 325։ Այս մասին տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 9, Երևան, 1969, էջ 241—253։

կան ժողովրդի կեղեքմամբ» և «ներքին ու արտաքին երկրների ավարառությամբ»։

Մի հոդվածում հնարավոր չէ մեկ առ մեկ անդրադառնալ Կաթողիկոսական դիվանի թուրքական վավերագրերին և վեր հանել դրանցից յուրաքանչյուրի աղբյուրագիտական արժեքը։ Մենք փորձեցինք զնահատել դրանք զիտական հետաքրքրություն ներկայացնող առանձին հարցերի սահմաններում միայն։ Ինչպես բերաթներն ու բույուրուլթիները, կալվածագրերն ու շարիաթական այլ կարգի արձանագրությունները, այնպես էլ Կարսի, Աիլցխայի, Բայազետի, Էրզրումի և Վանի վաշաների՝ հայոց կաթողիկոսներին և այլոց ուղարկած գրություններն ու տարբեր առիթներով Կաթողիկոսական դիվանում ամփոփված հայ առևտրական դասի ներկայացուցիչների և հայտնի կամ անհայտ անձանց անձնական նամակներն ու այլ բնույթի փաստաթղթերը բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ են պարունակում, որոնք կարող են նրպաստել պատմագիտությանը հետաքրքրող տարբեր հարցերի լուսաբանմանը։

Ստորև հրապարակում ենք Երևանի կադի Աբդուլլայի հիջրեթի 1137 թ. մուհառամի 4-ին (1724 թ. սեպտեմբերի 23) Կարբիի նահիայի նաիբին ուղարկած գրության բնագիրը, դրա վերծանությունը և հայերեն թարգմանությունը։ Ըստ այդ գրության Լչմիածնապատկան գյուղերի ռայաթները պարտավոր էին բերքի տասանորդը ընդունված կարգով, առանց թերանալու հատուցել վանքին (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. № 298, մեծ. 23×16 սմ, բնագիր)։



كرپى ناحيه سنده نائب الشرع القويم اولان افندى المكرّم.

بعد التحيّه الوافيه انجا اولنور كه اوچ كليسا و اوشكان و مصدره نام قريّه‌لر اهاليسى قرية مزبوره طپراغنده حاصل ايلدكلرى تركه لرندن اوچ كليسا طرفنه ويره گلدكلرى اعشارلرينى بوسنهٔ مباركه‌ده اداده تعلّل ايتملريله ديوان روانه عرضحال ايتدكده قديم الايام مدن نه‌گونه ويره‌گلمشلر ايسه اولمنوال اوزره انبوب زياده و نقصان طلبيله رنجيده اولنمامق بابنده ممهور بيورلدى صادر اولمغله موجبنجه مراسله تحرير و ارسال اولندى و صولنده گركدركه برموجب بيورلدى شريف قديمدن نه‌گونه ويره‌گلمشلر ايسه اولمنوال اوزره ويردروب خلاف شرع و خلاف بيورلدى شريف حركت ايتمامك اوزره تنبيه اكيد ايليه سز خلافيله حركت ايدرلر ايسه بوطرفه اعلام ايليه سز.

و السلام فى ٤ محرم من سنه ١١٣٧

الفقير عبد الله القاضى

بمدينه روان

مهر سندك ظهرنده.

«الله حسبى وحده و بقى عبده عبد الله ١١٢٩»

«Կարբիի նահիայում հաստատուն Շար'ի նաիբ՝ հարգարժան էֆենդի։

Առատ օրհնանքներով տեղեկացնում ենք, որ Ուշբիլիսա (Վաղարշապատ), Օշական և Մաստարա կոչվող գյուղերի բնակիչները, այդ գյուղերի սահմաններում իրենց աճեցրած բերքից այս տարի Ուշբիլիսային (էջմիածնի վանք) տրվող տասանորդի (աշար) հատուցման մեջ թերացել են։ Այն բանից հետո երբ այս կապակցությամբ Երևանի դիվանին բողոքագիր էր ներկայացվել՝ կնքված հրամանագիր է հրապարակվել, որ «հնուց ի վեր ինչ կարգով որ տասանորդը հատուցել են, նույն կարգը պետք է պահպանել և առավել կամ նվազ պահանջմունքներով նեղություն չտալ»։ Դրա համար էլ սույն գրությունը գրվեց և ուղարկվեց, որպեսզի ստանալուն պես կարգադրեք, որ ըստ սրբազան հրամանագրի, հնուց ինչ կարգով որ հատուցել են, նույն կարգով շարունակեն հատուցել։

Խստորեն կզգուշացներ, որ Շարիին և սրբազան հրամանագրին հակառակ չընթանան և եթե հակառակողներ լինեն, այդ մասին կտեղեկացներ մեզ։

Ավարտվեց 1137 թվականի մուհառամի 4-ին (1724 թ. սեպտեմբեր 23)։

Երևան քաղաքի կադի՝ նվաստ Արդուլլա»։

Վավերագրի մյուս էջում գրված է կադիի կնիքը՝ հետևյալ մակագրությամբ. «Աստված միակն է, արդար և հավիտենական, և նրա ծառան է Աբդուլլան, 1129 (1717)»։

ИСТОЧНИКОВЕДЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ТУРЕЦКИХ ДОКУМЕНТОВ МАТЕНАДАРАНА

Доктор историч. наук Л. Д. ПАПАЗЯН

(Резюме)

В «Диване» армянского католикоса, хранящемся в архивном отделе Матенадарана, имеется около 300 турецких официальных документов (грамоты султана, указы визирей и пашей, шариатско-нотариальные протоколы и иная официальная и частная переписка), изучение которых может способствовать освещению некоторых вопросов социально-экономической и политической истории Армении. В статье дается характеристика источниковедческой ценности этих документов. К ней прилагаются подлинник и перевод письма ереванского казия Абдуллы, посланного 4 мухаррамма 1137 г. хиджры (23 сентября 1724 г.) наибу Карпийского нахиа.